

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱԻԱԶԱՆԻ ՄԱՍՆԱԽՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՉՈՐՍ ԱՍՏԻՃԱՆՆԵՐՈՒ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, 29 Դեկտեմբեր, 2023-ին, Սուրբ Յակոբ Մծբնայ Հայրապետի նախատոնին, Երեկոյեան Ժամերգութենէն վերջ, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան Սրբազան Հայրը վարդապետական գաւազանի մասնաւոր իշխանութեան չորս աստիճանները տրւաւ օրհնութեամբ՝ Տ. Գէորգ Աբեղայ Հայրապետեանի, Տ. Ներսէս Աբեղայ Ալոյեանի եւ Տ. Աղան Աբեղայ Գոգչեանի, որոնք իրմէ ձեռնադրուած եւ վեղար ստացած էին 2014 թուականի Յուլիս 27-ին:

Խարտաւիլական էր, ըստ կանոնական սովորութեան, Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան, Սուրբ Աթոռոյս Լուսարարապետը՝ իրեն առնթերակայ ունենալով Տ. Խաղ Ծ. Վարդապետ Ճունտուրեանը եւ Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեանը:

Համաձայն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ սովորութեան, Ձեռնադրիչ Սրբազանը բազմած էր արդէն Մայր Տաճարի մուտքին կողմը: Բերուեցաւ վարդապետական գաւազանը՝ շղարշով ծածկեալ, որուն կը հետեւէին վարդապետական աստիճանի թեկնածուները, որոնք ծունկի գալով շնորհաբաշխ Պատրիարք Սրբազանին առջեւ, նախ հաւատոյ դաւանութեան, հերետիկոսութեանց նզովման եւ Ս. Հարց յիշատակին օրհնութեան իրենց նորոգեալ ուխտէն վերջ, գաւազանի առաջին երեք աստիճանները ստացան իրենց հոգեւոր Հօր ձեռքէն, եւ յետոյ դասին մէջ, բեմին առջեւ, չորրորդ աստիճանը: Վարդապետական աստիճաններու տուչութեան բանաձեւները ընդելուզուած էին շարականներով եւ Աստուածաշնչական պատշաճ ընթերցումներով:

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը հոգեկան բերկրանքով կատարեց այս տուչութիւնը, անոր մէջ տեսնելով թէեւ փոքրիկ, բայց լուրջ քայլ մը դէպի առաւելագոյն պայծառութիւն Ս. Աթոռոյս, որուն արժանաւոր գաւակներէն եղան ցարդ եւ յետ այսու եւս պիտի շարունակեն լինել երեք նորընծաները, այսուհետեւ վարդապետք Հայ Եկեղեցւոյ: Այդ զգացումով էր որ Նորին Ամենապատուութիւնը սրտագին յորդորական մը ուղղեց յետոյ իր ձեռնասուններուն, հայրական բաղձանքի, մաղթանքներու եւ օրհնութեան հոգւով թաթախուն եւ շնորհընկալ վարդապետներուն կուրծքը զարդարեց ականակուռ լանջախաչերով:

«Սիրոն» կ'աղօթէ նոր վարդապետներուն գաւազանի ծաղկման եւ խօսքերուն ու գործերուն պտղաբերման համար, որպէսզի կարող ըլլան հետեւիլ Պօղոս Առաքելի պատուէրին. «Վերակացու լինել հաւատարիմ Բանին Վարդապետութեան, զի կարող իցէ եւ միխիթարել ողջմտութեամբ վարդապետութեանն, եւ զհակառակորդսն կշտամբել» (Տիտոս 1:9) եւ շարունակեն աւելի եռանդով եւ նուիրումով իրենց Աթոռանուէր եւ եկեղեցաշէն գործունէութիւնը ի փառս Աստուծոյ եւ ի պայծառութիւն Եկեղեցւոյ: